

ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԱԼԻ ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ

Խորհուրդներ ընտանիքների համար Վաղ մանկական առողջության և լավության ազգային կենտրոնից (National Center on Early Childhood Health and Wellness)

Հասկանալ, թե ձեր բժիշկն ինչ է ասում ձեզ

Առողջապահական գրագիտությունը նշանակում է լավ հասկանալ առողջապահական տեղեկությունը և լավ որոշումներ կայացնել առողջապահության և բժշկական խնամքի վերաբերյալ:

Ինչու՞ է կարևոր այն

Շատեր դժվարանում են հասկանալ իրենց անհրաժեշտ առողջապահական տեղեկությունը՝ իրենց անձը և ընտանիքը խնամելու համար:

Երբ ծնողներ և խնամողներ հասկանան առողջապահական տեղեկությունն ու այն օգտագործելու կերպը, շատ հավանական է, որ երեխաները՝

- Ավելի քիչ բացակայեն դպրոցից
- Ավելի քիչ գևան մանկաբույժին կամ շտապ օգնության կայան անտեղի կերպով
- Ապրեն ավելի առողջ
- Ստանան կանխարգելիչ սրսկումներ, ինչպես՝ գրիպի սրսկումները

- Ունենան անվտանգ բնակարան, որտեղ ավելի քիչ արկածներ են պատահում

Առողջապահական տեղեկությունը հասկանալու և օգտագործելու կերպերը սովորելը կօգնի՝

- Ձեր բժշկի հետ զրուցելուն
- Հարցեր տալուն
- Բժշկի ցուցմունքներին հետևելուն
- Դեղը ճիշտ ընդունելուն կամ տալուն
- Անհրաժեշտ բժշկական ստուգումներն ու խնամքը ստանալուն
- Ձեր երեխան հիվանդանալու դեպքում ինչպես վարվելն իմանալուն
- Շաքարախտի, ասթմայի, քաղցկեղի նման հիվանդությունների կանխարգելման
- Ձեր և ձեր ընտանիքի համար առողջ որոշումների կայացման
- Օգնություն խնդրելուն

Բաներ, որոնք անելով կօգնեն ձեր երեխային

- Օգնություն **ԽՆԴՐԵԸ**, եթե չեք հասկանում առողջապահական ձևաթուղթը կամ չգիտեք ինչպես լրացնել այն:
- Ընթերցման կյուբերը **ԽՆԴՐԵԸ** ձեզ ոյուրահասկանալի լեզվով
- ԳՐԻ ԱՌԵԸ ձեր ունեցած հարցերը որևէ առողջական խնամքի այցի գնալուց առաջ:
- Ձեր **ԲԺՇԿԻՆ ՀԱՅՏՆԵԸ**, եթե չեք հասկանում նրա ասածը:
- Գրադարան գնալով հարցրեք ինչպես ճշգրիտ տեղեկություն գտնել Ձեր առողջապահական մտահոգությունների և դեղերի մասին:

- Ձեր Head Start-ից կամ երեխայի խնամքի ծրագրից տեղեկություն խնդրեք ձեզ մտահոգող առողջական խնդիրների մասին:
- Գնացեք առողջապահական պարապմունքների ձեր երեխայի Head Start ծրագրում և ձեր համայնքում:

